Պարոն/Տիկին Մ. Մեսրոպյան ին
ստորաբաժանման ղեկավարի անուն, ազգանուն

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի նախագահ
պարոն Մ. Մեսրոպյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Մ. Մեսրոպյան

«24» հունիսի 2026թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **Գործուղվող աշխատակցի անունը, ազգանունը՝**
   - Կամո Սարգսյան,
   - Արա Նռանյան:

2.Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի անդամներ:

3.Գործուղման վայրը և ժամկետները՝ Բուդապեշտ, Հունգարիա, 2026 թվականի հունիսի 17-18-ը:

4.Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Ջրային ոլորտի կարգավորողների եվրոպական ասոցիացիա (WAREG):

5.Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Ջրային ոլորտի կարգավորողների եվրոպական ասոցիացիայի (WAREG) 38-րդ լիագումար ժողովին:

6.Քննարկված թեմաները (հարցերը)՝ WAREG 38-րդ լիագումար ժողովը չորրորդն էր, որը կազմակերպվում է Բուդապեշտում: Մինչ այդ 2015, 2018 և 2022 թվականներին Բուդապեշտում արդեն իսկ կազմակերպվել էին WAREG լիագումար ժողովին: Այս անգամ ժողովին մասնակցում էին 25 անդամ կազմակերպության ներկայացուցիչներ:

Ժողովի բացման ժամանակ նշվեց, որ սույն թվականի ապրիլի 8-9-ին WAREG 37-րդ լիագումար ժողովը նախատեսվում էր անցկացնել Երևանում, սակայն տարածաշրջանային իրավիճակով պայմանավորված՝ այն կազմակերպվեց առցանց: Ուստի WAREG խորհուրդը հանձնառություն է ստանձնել 2027 թվականին նախատեսվող լիագումար ժողովն անցկացնել հունիսն՝ Հայաստանում:

Ժողովի ընթացքում ներկայացվեց շնորհանդես՝ Հունգարիայի ազգային կարգավորող մարմնի գործառույթների, ջրային ոլորտի առանձնահատկությունների, սակագնային քաղաքականության, լիցենզավորման առանձնահատկությունների, վերահսկողության և սպառողների պաշտպանությանը վերաբերող մի շարք հարցերի վերաբերյալ: Այնուհետև ներկայացվեց արտադրողի ընդլայնված պատասխանատվության (Extended Producer Responsibility, EPR) մասով WAREG-ի կողմից իրականացված ուսումնասիրությունը, որի արդյունքում նախապատրաստված WAREG-ի համատեղ դիրքորոշումը դրվեց քվեարկության:

Ներկայացվեցին ԵՄ ջրային ոլորտի կարգավորման նորությունները, ինչպես նաև WAREG-ի շրջանակում գործող աշխատանքային խմբերի հաշվետվությունները: Ներկայումս WAREG-ի շրջանակում գործում է հինգ աշխատանքային խումբ՝ սակավության և երաշտների, քաղաքային կեղտաջրերի մաքրման, խմելու ջրի ԵՄ դիրեկտիվի կիրարկման, սակագների, ինչպես նաև կատարողական ցուցանիշների հարցերով: Նախատեսվում է հաջորդ տարի կրճատել խմբերի քանակը մեկով՝ աշխատանքային ծրագրից հանելով սակավության և երաշտների աշխատանքային խումբը: Ուստի WAREG-ի քարտուղարության խնդրանքով բոլոր անդամ կազմակերպությունները պետք է ներկայացնեն աշխատանքային խմբերի անդամների թեկնածություններ:

Առանձնահատուկ քննարկվեց աղբահանության կարգավորումը WAREG-ի իրավասությունների շրջանակում ներառելու հարցը: Հաշվի առնելով, որ ԵՄ մի շարք երկրների ազգային կարգավորող մարմինները կարգավորում են նաև աղբահանության ոլորտը, առաջարկվում էր WAREG-ի կանոնադրությունում և աշխատանքային կանոններում կատարել փոփոխություններ՝ ավելացնելով աղբահանության ոլորտը: Այս փուլում վերոնշյալ թեմայի մասով իրականացվող աշխատանքները կֆինանսավորվեն այն ազգային կարգավորող մարմինների կողմից, որոնք կարգավորում են աղբահանության ոլորտը:

Այս համատեքստում Հանձնաժողովը ներկայացրել է, որ այս պահին Հայաստանում աղբահանության ոլորտի կարգավորումը չի իրականացվում Հանձնաժողովի կողմից: ԵՄ անդամ որոշ երկրների ներկայացուցիչների կողմից առաջարկվեց աշխատանքային խմբերի շրջանակում հետագայում քննարկել աղբահանության հարցը կոմունալ փաթեթում ներառելու թեման: ԵՄ որոշ անդամ երկրներ նշեցին, որ այս պահին դա իրատեսական չէ՝ հաշվի առնելով, որ նշված ծառայությունները մատուցվում են տարբեր կարգավորվող ընկերությունների կողմից:

Քննարկման դրվեց նաև WAREG-ի և Ավազանային կազմակերպությունների միջազգային ցանցի (INBO) միջև կնքվող փոխըմբռնման հուշագիրը: Այս գաղափարը ողջունվեց անդամների կողմից՝ հաշվի առնելով, որ շատերը համագործակցում են INBO-ի հետ:

Ներկայացվեց նաև Էներգետիկայի կարգավորողների տարածաշրջանային ասոցիացիայի (ERRA) գործունեությունը, որի հիմնադիր անդամ է նաև Հանձնաժողովը: Քանի որ ERRA-ի գրասենյակը նույնպես գտնվում է Բուդապեշտում, ERRA-ի գլխավոր քարտուղարը ներկայացրեց կազմակերպության գործունեությունն ու առանձնահատկությունները: WAREG-ի որոշ անդամ կազմակերպությունների ներկայացուցիչներ, այդ թվում՝ Հանձնաժողովի ներկայացուցիչը, հանդիսանում են նաև ERRA-ի նախագահության անդամներ:

Հանդիպումն ամփոփվեց WAREG-ի քարտուղարության գործունեության վերջին նորությունների ներկայացմամբ:

7.Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Առանձին հանդիպում կայացավ հանձնաժողովի և Հունաստանի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչների միջև, որի շրջանակում քննարկվեց երկկողմ փոխըմբռնման հուշագրի ստորագրման հարցը, որը, ըստ նախնական պայմանավորվածության, կկայանա 2026 թվականի հուլիսի 21-22-ին Երևանում EU4Energy նախաձեռնության կողմից կազմակերպվող փորձագիտական հանդիպման շրջանակում, որտեղ ներգրավված են նաև Հունաստանի ներկայացուցիչները:

8.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Ձեռք բերված պայմանավորվածությունների համաձայն՝ առաջարկվում է.

- շարունակել քննարկումները Հունաստանի ազգային կարգավորող մարմնի հետ՝ փոխըմբռնման հուշագրի ստորագրման վերաբերյալ,
- շարունակել համատեղ քննարկումները և սկսել Հանձնաժողովի նախապատրաստական աշխատանքները WAREG քարտուղարության և խորհրդի հետ 2027 թվականի հունիսին Երևանում WAREG լիագումար ժողովի կազմակերպման նպատակո,
- Հանձնաժողովի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատակիցներից ներկայացնել թեկնածություններ՝ WAREG աշխատանքային խմբերում ներգրավվելու նպատակով:

Գործուղվող ---------- **Կ. Սարգսյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

24.06.2026թ.

Գործուղվող ---------- **Ա. Նռանյան**

(ստորագրությունը, ամսաթիվը)

24.06.2026թ.

Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

որոշման

Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը Հրաման 410-ՀՆ 18.05.2026թ.

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Կամո Սարգսյան**

ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի անդամ՝ **Արա Նռանյան**

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)

4. Գործուղման վայրը ք.Բուդապեշտ /Հունգարիա /

5. Գործուղման ժամկետները **16.06.2026-19.06.2026 թթ**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Կամո Սարգսյան	Արա Նռանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս)			-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	157,379	157,379	314.757
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	138	138	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	50,794	50,794	
	Օրերի քանակը	3	3	
	Ընդամենը (դրամ)	152,381	152,381	304.762
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դոլար)	84	84	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	30,930	30,930	
	Օրերի քանակը	4	4	
	Ընդամենը (դրամ)	123,719	123,719	247.438
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			-
	Այլ ծախսեր (տաքսի)		18,446	18.446
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		433.478	451.924	885.403

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Ն)

Ամսաթիվ 26.06.2026թ.